ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1522-Ա/2 **03.11.2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ, ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով իրականացվող մշակութային ծրագրերի «Թանգարանային և գրադարանային ոլորտների նախագծեր և միջոցառումներ» անվանակարգի մրցութային հանձնաժողովի նիստերի արձանագրությունները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) պատվերով իրականացվող մշակութային ծրագրերի մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված ծրագրերի, իրականացնող կազմակերպությունների և հատկացվող գումարների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ նախապատրաստել և նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել դրամաշնորհի հատկացման պայմանագրեր (այսուհետ՝ պայմանագրեր)՝ համաձայն հավելվածի:

3. Նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության և ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրերին համապատասխան իրականացնել պայմանագրերի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրերով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազմման և ստորագրման գործառույթները:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ն. Խաչատուրյանին:

Նախարար **Արայիկ Հարությունյան**

X _____